ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 6-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, ուր գործարար խոսակցություն ծավալվեց գիտական կոլեկտիվների ձեռք բերած հաջողությունների, հանրապետության գիտության զարգացման խնդիրների ու հեռանկարների, կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ նրա կապի հետագա ամրապնդման շուրջ:

Ժողովը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը:

— Հանրապետության գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը,— ասաց նա,—տեղի է ունենում Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակի 40-ամյակի նախօրյակին: Նշելով այս պանծալի տոնը, մենք՝ գիտության աշխատողներս, հպարտությամբ ենք վերհիշում այն դերը, որ խաղաց գիտությունը մեծ հաղթանակի գործում:

ՍՄԿԿ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումը,— այնուհետև ասաց նա,— նշեց երկրի տնտեսական և մշակութային նոր վերելք ապահովելու ուղին, որով անշեղորեն ընթանալու համար անհրաժեշտ է խիստ պահանջներ ներկայացնել բոլոր գիտական հիմնարկներին, այդ թվում և գիտությունների ակադեմիաներին, որոնց հիմնարար հետազոտությունները պետք է նոր ուղիներ բացեն գործնական, անտեսական խնդիրների լուծման համար:

Այնուհետև Վ. Հ. Համբարձումյանը անդրադարձավ գիտական տարբեր հիմնարկների կատարած տեսական ու գործնական կարևոր նշանակություն ունեցող աշխատանքներին, դրանց բարձր գնահատական տվեց և շեշտեց առանձին գիտական կոլեկտիվների աշխատանքը բարելավելու, այսօրվա հրատապ խնդիրների լուծմանը ծառայեցնելու անհրաժեշտությունը:

Վերջում Վ. Հ. Համբարձումյանը հավաստիացրեց, որ հանրապետության գիտնականները այսուհետև ևս պատվով կկատարեն իրենց առջև դրված խնդիրները և կուսակցության XXVII համագումարը կդիմավորեն նոր նվաճումներով:

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1984 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Գալոյանը, որը կուսակցության առաջադրած նոր պահանջների լույսի ներքո վերլուծեց հաշվետու ժամանակաշրջանում ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտնականների ձեռք բերած հաջողությունները:

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Բ. Նալբանդյանը, Լ. Մ. Ջրբաշյանը, թղթակից անդամներ Վ. Վ. Ալեքսանյանը և Պ. Մ. Հերունին:

Այնուհետև «1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի հաղթանակի համաշխարհային պատմական նշանակությունը» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը:

Տարեկան ընդհանուր ժողովում կայացավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պարգևների հանձնման ամենամյա հանդիսավոր արարողությունը:

«Մեծարման գիր» ստացավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Վ. Կասյանը:

Ընդհանուր ժողովին մասնակցում էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Բ. Ե. Սարկիսովը, Յ. Տ. Սարգսյանը, Կ. Լ. Դալլաքյանը, Լ. Ն. Ներսիսյանը:

Մայիսի 5-ին տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի բաժանմունքների տարեկան ժողովները, որտեղ հասարակական գիտությունների բաժանմունքների 1984 թ. գործունեության հիմնական արդյունքների և հետագա անելիքների մասին զեկուցումներով հանդես եկան բաժանմունքների ակադեմիկոս քարտուղարները, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Բ. Ն. Առաքելյանը և Գ. Ա. Բրուտյանը: